

Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեան Յունիս 6էն 7 պաշտօնական այցելութիւն մը պիտի կատարէ Պիելոռուսիա: Պիելոռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան բանբեր Փաւել Լատուշքօ յայտնեց, որ նախագահ Քոչարեան հանդիպում պիտի ունենայ Պիելոռուսիոյ նախագահ Ալեքսանտր Լուքաշենքոյի հետ: Պիտի կայանան հայ-պիելոռուսական բանակցութիւններ՝ ընդլայնուած կազմերով: Պիտի քննարկուին քաղաքական եւ առեւտրական համագործակցութեան, միջազգային կազմակերպութիւններու մէջ գործակցութեան, կրթութեան, սպորտի, կրթութեան, մարմնամարզի բնագաւառներէն ներս յարաբերութիւններու կարգազման առնչուող հարցեր:

## ԸՆԴՄՈՒԱԶԵԼՈՎ ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ԿՈՉԻՆ ԼԻԲԱՆԱՆԱՇԱՅՈՒԹԻՒՆԸ «ՈՉ» ԸՍԱԲ ԻՐԵՆ ՈՒՂՂՈՒԱԾ ԲՈԼՈՐ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Տարակոյս չկայ, որ վաղը, 2 Յունիսին տեղի ունենալիք Մեթնի մասնակի երեսփոխանական ընտրութիւնները մէկէ աւելի պատճառներով կը պզտուրեցան լիբանանեան քաղաքական կեանքին մէջ: Ընտրութիւններ, որոնք կու գան անգամ մը եւս լուսարձակները պորաւոր կերպով կեդրոնացնելու՝ ընտրական գործընթացին վրայ իր հիմնական ազդեցութիւնը ունեցող հայ ընտրապանգումին վրայ:

Այս անգամ եւս, հայկական հաւաքական կամքի արտայայտութիւնը քուէատուփերուն մէջ սարսափ կը ստեղծէ այն մարդոց մօտ, որոնք նախօրօք կը պզտայ կամքին ուժը: Ու սարսափը կը վերածուի խժքմանքի, որ կը ժպրհի հարցականի տակ առնել լիբանանահայութեան քաղաքական կեցւածքը, որ կը փորձէ յաշտ ամբողջ լիբանանեան հանրային կարծիքին լիբանանահայ ընտրապանգումին փակցնել այնպիսի ամբաստանութիւններ, որոնք ըստ ամենայնի չեն պատկանիր լիբանանահայութեան, եւ մանաւանդ Մեթնի հայ քուէարկողներուն:

Մեթնի հայ քուէարկողը վաղը դարձաւ, իր բոլոր հատուածներուն միասնական եւ կոտ շարքերով իր հատու պատասխանը պիտի տայ նման ամբաստանութիւններուն: Այս առիթով յատկանշական կարեւորութեան փոփոխութեան օգտին ունէր երէկ, ժամը 21:00էն սկսեալ «Շաղկոյեան» կեդրոնի կառատան մէջ Հ. Յ. Ընտրական Քարտակցական Մարմինի կազմակերպութեամբ տեղի ունեցած ժողովրդային ընտրական մեծ հաւաքը:

### 51 ՆՈՐԱԳԻՐՆԵՐ ՄԻԱՑԱՆ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՅՈՒԹԵԱՆ ՇԱՐՔԵՐՈՒՆ

Հայաստանի Հանրապետութեան 84 ամեակին առիթով, երէկ, երեկոյեան ժամը 18:30ին, Պուրճ Համուտի Յակոբ Տէր Մելքոնեան սրահին մէջ 51 նորագիրներ միացան Հ. Յ. Դաշնակցութեան Լիբանանի ընտանիքին:

Օրուան կնքահայրը՝ ընկ. Գեորգ Գանտահարեան, նորագիրներուն ուղղուած իր պատգամին մէջ շեշտը դրաւ «դաշնակցական տիպար»ի հասկացողութեան վրայ՝ աւելցնելով, որ դաշնակցական բլլայու հիմնական յատկանիշներէն մէկն է կազմակերպական երկարատեւ կարգապահութիւնը:

Գ. Գանտահարեան նաեւ նշեց, որ դաշնակցական դառնալը դիրքին չէ, այլ կ'ենթադրէ ծով գոհողութիւն: Մանաւանդ եսակեդրոն մօտեցումը եւ անձնասիրութիւնը տեղ չունին Հ. Յ. Դաշնակցութեան մէջ, ուր գոյութիւն ունի միայն ու միայն հաւաքական շահերու պաշտպանութեան գերիւնդիր:

Շուշիի պատագրութեան իբրեւ խորհրդանիշ նորագիրներու խումբին անունը մկրտուեցաւ «Շուշի սերունդ»:




(Լուսանկարները Բ. ՊԵՐՊԵՐԵԱՆԻ)

Հաւաքին ներկայ եղող բազմահազար հայորդիները եկան անգամ մը եւս իրենց «այո»ն ըսելու Հ. Յ. Դաշնակցութեան օգտին ունէր երէկ, ժամը 21:00էն սկսեալ «Շաղկոյեան» կեդրոնի կառատան մէջ Հ. Յ. Ընտրական Քարտակցական Մարմինի կազմակերպութեամբ տեղի ունեցած ժողովրդային ընտրական մեծ հաւաքը:

Հաւաքին ներկայ եղող բազմահազար հայորդիները եկան անգամ մը եւս իրենց «այո»ն ըսելու Հ. Յ. Դաշնակցութեան օգտին ունէր երէկ, ժամը 21:00էն սկսեալ «Շաղկոյեան» կեդրոնի կառատան մէջ Հ. Յ. Ընտրական Քարտակցական Մարմինի կազմակերպութեամբ տեղի ունեցած ժողովրդային ընտրական մեծ հաւաքը:

### 2002Ի ՄՈՆՏԻՍԻԱԼԸ ՄԿՍԱԻ ՄԵԾ ԱՆԱԿՆԿԱԼՈՎ



Բացման հանդիսութեան տեսարան մը:

Երէկ տրուեցաւ ազդանշանը 2002ի Մոնտիսիալի Տրանսա - Սենեկալ բացման մրցումով, որ աւարտեցաւ Ափրիկէի ախոյեանին անակնկալ յաղթանակով՝ 1-0 արդիւնքով: Մրցումին նախորդեց բացման պաշտօնական բացառիկ հանդիսութիւնը: Մանրամասնութիւնները կարդալ մարզական էջով (9րդ):

թեկնածու Միրնա Մըր - Ապու Շարաֆի: Հաւաքին ներկայ էին նաեւ երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան, Մեթնի երեսփոխաններ Էմիլ Էմիլ Լահուտ, Ղասսան Աշքար եւ Անթուան Հատտատ, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարրիեան, Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ Երւանդ Փամպուքեան, Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յովիկ Մխիթարեան ու ՌԱԿԻ ներկայացուցիչներ:

Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի անունով յաջորդաբար խօսք առին Յակոբ Հաւաքեան եւ Ստեփան Տէր Պետրոսեան՝ հայերէնով եւ արաբերէնով:

Յակոբ Հաւաքեան իր խօսքին մէջ անդրադարձաւ այն յերիւրանքներուն եւ ամ

Շարք՝ էջ 10

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ 84Դ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԵԾ ՇՈՒՔՈՎ ՆՇԵՑ ԼԻԲԱՆԱՆԱՇԱՅՈՒԹԻՒՆԸ

Երէկ երեկոյեան ժամը 7:30ին, Յակոբ Տէր Մելքոնեան թատերասրահին մէջ տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան 84 ամեակին նուիրուած տօնակատարութիւն: Տօնակատարութեան ներկայ էին Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեորգ եպսկօպոս Կարապետ, երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար Սեպուհ Յովնանեան, Հ. Յ. Դ. Բիւրոյի անդամ Երւանդ Փամպուքեան, Հ. Յ. Դ. Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յովիկ Մխիթարեան, ՌԱԿԻ ներկայացուցիչներ, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մարրիեան, պատկան մարմիններու եւ հայկական կազմակերպութիւններու ներկայացուցիչներ եւ մեծաթիւ ժողովուրդ:

Լիբանանի եւ Հայաստանի քայլերգներու ունկընդրութեան հետք բեմ բարձրացաւ Զօհրապ Ղազարեան, որ կատարեց բացման խօսքը: Ան իր խօսքը ներկաներուն ուղղելով ըսաւ, որ 84 տարուան փորձառութեամբ Հայ ժողովուրդը անգամ մը եւս կանգնած է Հայաստանի յարուստեան խորհուրդով:

Զօհրապ Ղազարեան շեշտեց, որ 1918ին իրագործուած անկախութիւնը հանգրուանային չէր եւ ըսաւ, թէ անհրաժեշտ է Մայիս 28ի աւանդը վերածել համազգային սեփականութեան, որովհետեւ «ազգի մը փրկութեան միակ ուղին ոչ միայն անկախութեան կերտումն է, այլեւ յարատեւ զոհաբերութեամբ ու պայքարով անկախութիւնը ամրապնդել գետնի վրայ եւ ազգին զաւակներուն մտքերուն ու հոգիներուն մէջ»: Նշելով, թէ Հայ ժողովուրդը ազգովին եւ համաժողովրդային պաշտպանութեամբ կերտեց Մայիս 28ն ու Արցախեան յաղթանակները, Զ. Ղազարեան ըսաւ, որ արտերկրի հայութիւնը այսօր պէտք է ուժեղ կազմակերպութեամբ Հայ ժողովուրդի պայքարը իր նպատակին առաջնորդէ:

Բացման խօսքէն ետք բեմ բարձրացաւ Հայ Աւետարանական Միութեան Կեդրոնական Մարմինի ատենապետ վերապատուելի դոկտ. Փոլ Հայտոսեան, որ ներկաներուն թելադրեց յիշել անկախութեան օրը եւ քննել հանրապետութիւն ունենալու պարզեւր, վերագտնել անկախութիւն հաստատելու կորովը եւ ան

Շարք՝ էջ 10

## ԽԱՒԻԷ ՍՈՒՆԱ ՏԵՍԱԿՅԵՑԱԻ ԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ԵՐԵՔ ՊԵՏԵՐՈՒՆ ՀԵՏ

Երեւոյական Միութեան արտաքին քաղաքականութեան պատասխանատու Խաւիէ Սոյանա, որ երկու օրէ ի վեր Պէյրութ կը գտնուէր, երէկ տեսակցեցաւ նախագահ Էմիլ Լահուտի հետ: Պատասխան մէջ կայացած հանդիպումին ներկայ էին նաեւ Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացի երեւոյացի յատուկ պատուիրակ Միկէլ Անխէլ Սորաթիոս, Սոյանայի բանորբ Բրիսթինա Կարաշ, խորհրդական Սանչո Վիքթոր Մարթան, Լիբանանի մէջ Ե. Միութեան ղեկավար ֆոթորիք Ռոնո եւ Սպանիոյ ղեկավար Միկէլ Անխէլ Քարիտո, որուն երկիրը կը վարէ Երեւոյական Միութեան ընթացիկ շրջանի նախագահութիւնը:

Նախագահ Լահուտ ողջունեց Ե. Միութեան ի գործ դրած Ծարը՝ էջ 9

## ԻՐՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

31 Մայիսի թիւով, տեղական մամուլը լուսարձակի տակ առած էր Լիբանանի ներքին գործոց նախարար Էլիաս Մըրի գեղարարութեամբ ժողովի հարցազնուցումը կը գրեն: «Նախարար Էլիաս Մըրի խիստ ոճով գեղարարութեամբ ընթացքին խանգարիչ որեւէ քայլ առնելէ եւ յատկապէս ըստ: «Տեղեկութիւններ ունինք, որ ժողով հարցի կնկան զուակը՝ Բաֆֆի Մատէան կը ծրագրէ հարցեր ստեղծել Պոլսը Համուտի մէջ: Մատէանը կը գեղարարեմ, որ ինք Մեթնի բնակիչ է եւ իրաւունք չունի ընտրական կեդրոնները մտնելու, եթէ ան կամ ոեւէ համայնավար տարր նման Ծարը՝ էջ 9

## Ի. ՊԱՅՐԱԳՏԱՐԵԱՆ ՀՄԱՅԵՑ

Աշխարհահռչակ սփորանս Իսլամի Պայրագտարեան երէկ երկրորդ անգամ ժողովուրդի մէջ երաժշտաւոր հանրութեան հրամցուց դասական երգարուեստի վայելքի անկրկնելի պահեր՝ մեկնաբանելով Ռուսիայի եւ Վերտի օփերաներէն աշխատները:

Միջազգային բազմաթիւ մրցոյթներու դափնեկիր երգչուհին իր կատարումներուն մէջ ինքնուրուի գերազանցեց եւ անվարան կարելի է հաստատել, որ ան կը դասուի մեծերու շարքին:

Երգահանդէսին աւարտին Ի. Պայրագտարեան ներկայներուն բուն ծափերուն եւ պիտերուն ընդառաջելով՝ խոր պագուումով երգեց Մոցարթի Ալեյուեան, երկնային ու հոգեւոր սքանչելի մթնոլորտ մը ստեղծելով:

Իսլամի իր ձայնի եւ երգեցողական անթերի թեքնիքին միացուցած է բնական խիստ տպաւորիչ ներկայութիւն, որ իրաւացիօրէն անոր կու տայ իրաւունքը՝ մեկնաբանելու մեծատաղանդ յօրինողներու օփերաներու գլխաւոր հերոսներուն դերերգները:

## ԱՐՑԱԽԻ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ ՖՈՆՏԻՆ

●Ժիրար Եագուպեանի մահուան քառասունընց ամիսով,  
Տեր եւ տիկին Պետրոս Խնչոյեան 10 \$

**ՄԱՅՐԵՐՈՒ ՕՐ**

Կազմակերպութեամբ՝  
Հայաստանեայց Առաքելական  
Եկեղեցաւորաց Եղբայրակցութեան Երիտասարդացի  
Մասնակցութեամբ՝  
Մանկապատանեկան բաժնին  
Օրհնութեան խօսք՝  
**ՇՈՒՆ. Ս. ՓԱՌԷՆ ԿՐԴ. ԿԱՐԿԱՆԵԱՆ**

●Գեղարուեստական յայտագիր  
●Թատերական ներկայացում «Աճճուր Մայրը»  
Տեղի կ'ունենայ Շաբաթ, 1 Յունիս 2002ին երեկոյեան ժամը ճիշդ 8:00ին, Եղբայրակցութեան աղօթարահին մէջ:

ՀՐԱԻՐ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ  
ԹՈՐՈՍ ԴՈՍԼԻՆ  
ԿԵՐՊԱՐՈՒԵՍԻ ԱԿԱԴԵՄԻԱ

**ԳԵԱԳՐՈՒԹԵԱՆ  
ՄԻՋ - ԴՊՐՈՑԱԿԱՆ  
ՑՈՒՑԱՇԱՆԴԵՍ ՄՐՑԱՆՔ**

Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 7 Յունիս 2002, երեկոյեան ժամը 6:00ին, Համագայիցի Ն. Փալանճեան ճեմարանի «Կասպորական» սրահին մէջ, Չորաք Էլ Պլաթ:

Ցուցահանդէսը բաց է մինչեւ Շաբաթ, 8 Յունիս 2002, կէսօրէ ետք ժամը 4:00էն 7:00ը:

ՀՐԱԻՐ

Sponsored by: WINSOR & NEWTON  
Agents: CITY STATIONARY CO.

ԼԵՆԱՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱԿԻ  
ՏԱԳՆԱԳԻ ԼՈՒՇՄԱՆ ՄԷՉ

## ԹՈՒՐՔԻԱ ՄԻՋՆՈՐԴ ՉԻ ԿՐՆԱՐ ԸԼԼԱԸ

ԿԻՐՄԷ ՕՍԿԱՆԵԱՆ

Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան երէկ Երեւանի մէջ մամուլի ասուլիսի մը ընթացքին, անդրադարձնալով վերջերս Ռէյքիավիքի մէջ կայացած Հայաստան - Թուրքիա - Ալբանիան արտաքին գործոց նախարարներու հանդիպումին, ինչպէս նաեւ յառաջիկային տոյնանման հանդիպումներու կայացման, յայտնեց, թէ «եռակողմանի հանդիպումները կը գումարուին, որպէսզի երեք երկիրներէն իւրաքանչիւրը իր վրայ վերցնէ թէ՛ պատասխանատուութիւնը եւ թէ՛ պարտաւորութիւնը, իւրաքանչիւրը իր դրական, շօշափելի եւ գործնական ներդրումը ունենալու Կովկասի մէջ իրավիճակի բարելաւման, խաղաղութեան եւ կայունութեան հաստատման, նաեւ հակամարտութիւններու լուծման ուղղութեամբ»:

Նախարարը անգամ մը եւս նշեց, թէ Լեռնային Ղարաբաղի տագնապին մէջ Թուրքիա միջնորդ չի կրնար ըլլալ, որովհետեւ ո՛չ Հայաստան ո՛չ ալ Ալբանիան նոր միջնորդութեան կարիք ունին: «Լեռնային Ղարաբաղի տագնապի լուծման միջնորդները ԵԱՀԿի Մինսքի խմբակի նախագահներն են եւ բաւական արդիւնաւետ ձեւով կ'իրականացնեն իրենց գործը եւ նոր միջնորդութեան կարիք չկայ», ըսած է նախարար Օսկանեան:

## ՏՆՕՐԷՆՆԵՐՈՒ ԵՒ ԿՐԹԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՀԱՆԳԻՊՈՒՄ



Երէկ, Ուրբաթ 31 Մայիսի երեկոյեան ժամը 6:00ին, Քաղաքի Ազգային առաջնորդարանին մէջ, նախագահութեամբ Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեանի, տեղի ունեցաւ կրթական մարմիններու ներկայացուցիչներու եւ Լիբանանահայ վարժարաններու տնօրէններու հանդիպում:

Այս հաւաքին գլխաւոր նպատակն էր գործնական քայլեր առնել՝ օտար վարժարաններ յաճախող Հայ աշակերտներուն հոսքը կասեցնելու նպատակով: Հանդիպումին ընթացքին ներկայացուցեցան զանազան առաջարկներ Հայ վարժարանն ու անոր գործունէութիւնը, աշխատանքները եւ տուած արդիւնքները լաւապէս եւ ճշգրտօրէն ներկայացնելու առնչութեամբ: Այդ նպատակի իրագործման համար յարմար նկատուեցաւ դիմել մամուլի, լրատուամիջոցներու եւ յատուկ պրակներ հրատարակել այս առնչութեամբ: Արժարժուեցան նաեւ այլ հարցեր եւ խնդիրներ եւ շեշտը դրուեցաւ այն իրողութեան վրայ, թէ պէտք է Հայ դպրոցին անկրկնելի դերը եւ Հայակերտման միակ օճախը ըլլալու գիտակցութիւնը ներմուծել Հայ ազգի բոլոր զաւակներուն մօտ եւ այս առնչութեամբ աշխատանքներ տանելու սկսաւ ներկայ կազմը:

Գեղամ եպս. Խաչերեան ողջունեց ներկաները եւ իրենց ձեռնարկած ազգապահպան առաքելութիւնը:

## «ԱԶԳԱԿ»Ի ՖՈՆՏԻՆ

●Տոքթ. Եղիկ Գոնեալեանի մահուան քառասունընց ամիսով,  
Տիկին Ալիս Պազգալեան 100,000 Լ. Ո.

**ՄԱՅԻՍԵԱՆ ՓԱՌԱՏՕՆ**

Հովանաւորութեամբ՝  
**Ն. Ս. Օ. Տ. Ս. ԱՐԱՄ Ա. ԿԵՐԱՓԱՈՒ**  
(Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ)


Նախագահութեամբ՝  
**ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆԻ**  
(Բարեջան Առաջնորդ Լիբանանի Հայոց Թեմի)

Կազմակերպութեամբ՝  
**Հ. Մ. Բ. Մ. Ի. ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ**

Տեղի կ'ունենայ Կիրակի, 9 Յունիս 2002ի երեկոյեան ժամը 6:00էն սկսեալ, Պոլսի Համուտի Զաղաքապետարանի դաշտին վրայ:

## «ԿՈՍԻՏԱՍ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ ՈՒՆԵՑԱԻ ԻՐ ԵԼՈՅԹԸ

Համագայիցի «Պարոյր Սեւակ» մասնաճիւղի (Այնճար) «Կոմիտաս» երգչախումբը այս տարի կը ընդունէ իր 30 տարիները, գորս բոտ արժանուէր նշելու համար Ուրբաթ, 31 Մայիսի երեկոյեան ժամը 8:30ին երգչախումբը մատուցեց բարձրորակ ելոյթ մը: «Ուայ. Բոնսեփ»-ի կազմակերպութեամբ այս ձեռնարկը տեղի ունեցաւ Պէյրութի Ամերիկեան համալսարանի «Էսէմպլի Հոլ»-ին մէջ՝ ներկայութեամբ Լիբանանի մէջ Հայաստանի ղեկավար Արեգ Յովհաննիսեանի, նախկին երեսփոխան Նուրիճան Տեմիրճեանի, Համագայիցի պատկան ներկայացուցիչներու, ինչպէս նաեւ Հայ եւ օտար արուեստասէրներու:




Ղեկավարութեամբ խմբավար Պարգե Թասալեանի, «Կոմիտաս» ներկայացուցիչներու մասնակցութեամբ երգչախումբը Գեղարք Գանաւարեան, խմբավարներ Կոմիտաս քնն. Փանոսեան, Պարգե Թասալեան, Սարգիս Փանոսեան, Մաշտոց քնն. Աշգաղայի երգարուեստէն կտորները:

Երգահանդէսին ընթացքին եւ երգչախումբին գործունէութեան երգչախումբին ամէնէն հին անդամը՝ Գալուստ Փայագեան:

Նշենք, որ «Կոմիտաս» Ուրբաթ, 7 Յունիսին կ'իլիկիոյ կաթողիկոսարանի շրջափակին մէջ պիտի ունենայ Հայ երաժշտութեան նուիրուած համերգ մը:

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ «ԿԱՐԿԱՉ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԻՆ ԱՇԽԱԿԵՐՏԱԿԱՆ ԵԼՈՅԹԵՐԸ

Համագայիցի «Կարկաչ» մանկապատանեկան երգչախումբը, ղեկավարութեամբ խմբավար Զաքար Բեյրաբեանի, 24 եւ 31 Մայիսին աշակերտական երկու ելոյթներով սկսաւ իր տարեկան ելոյթներուն շարքը:



Յնչորդաբար Յովհաննիս Պողոսեան եւ Սիրան Մանուկեան արահներուն մէջ տեղի ունեցած համերգներուն ընթացքին բեմ բարձրացան «Կարկաչ»ի երէց, միջակ եւ կրտսեր անդամները,

## ՄԻՆՉ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԻԳԵՐԸ ԿԸ ՀԱՐՈՒՆԱԿՈՒՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՓՐԿԵԼՈՒ ՀԱՍԱՐ

## ԻՍՐԱՅԷԼ ԿԸ ՄՆԱՅ ԱՆԴՐՈՒԹԵԼԻ ԻՐ ՉԻՆՈՒՈՐԱԿԱՆ ԱՐՇԱԽԻՆ ՄԷՉ

«Իսրայէլ կ'ուզէ ծունկի բերել մեր ժողովուրդը», յայտարարեց պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսսէր Արաֆատ, իրեն հակադրուած Նապոլեոն ներթուփումին, որ տեղի ունեցաւ երէկ: Արաֆատ ակնցուց, որ պաղեստինցիները հանգիստ պիտի չընեն մինչեւ որ պաղեստինցի մասնուկ մը պաղեստինեան դրօշակը բարձրացնէ Երուսաղէմի պարիսպին, եկեղեցիներուն եւ միներիչներուն վրայ:

Իսրայէլեան բանակի բանրեր Ռոն Բիթրի

րոնք շուրջ մէկուկէս ժամուան տեւողութեամբ երգեցին աւելի քան տասնեակ մը հայերէն եւ օտար երգեր: «Կարկաչ» ելոյթ պիտի ունենայ նաեւ Շաբաթ, 8 Յունիսին:

Երկտրածին մեքենայ մը: Բանակը ներխուժեց նաեւ Պալատ գաղթականներուն եւ սրճարանի «Աքսայի նահատակներու փաղանդներ»ուն միջնաբերդերէն մէկը: Իսրայէլի մէջ երկուշարթի օր անձնասպանական գործողութիւն մը կատարած պաղեստինցիներ Պալատայի էր: Ականատեսները յայտնեցին նաեւ, որ իսրայէլացի զինուորներ Պալատայի փողոցներուն մէջ բարձրասունբով «Աքսայի նահատակներու փաղանդներ»էն պահանջեցին անձնատուր ըլլալ: Չինուորները նաեւ խուզարկեցին

**ՏԱԽՈՒ  
ՅԱՐԿԱԲԱԾԻՆ**

●Պոլսի Համուտ, մատչելի գին: Հեռ. 01-249356 եւ 03-735023:


**ԿՈՒՉՈՒԻ**

●Հաստատութիւն մը իր վաճառատան համար կարիք ունի վաճառող օրինորդներու: Դիմել՝ հեռ. 01-268610:

**ԿԱՐՉՈՒ ԸԱՊԻՆ**

●«Արուա Մարիմա» մատչելի գին: Հեռ. 01-322616 եւ 03-670033:

# ԻՆՉՊԵՍ ԵՐԷԿ, ՆԱԵՒ ՎԱՂԸ ՀԱՅ ԱՆՀԱՏԻՆ ՔՈՒԷՆ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՈՒԺԸ



## ՔՈՒԷՍԱՐԱՓ

Մերսի երեսփոխանական մասնակի ընտրություններում նախօրեակին, «Ազդակ» իր ներքին էջերը ամբողջությամբ կը տրամադրէ Մայիս ամիսը յատկանշած ընտրական աշխատանքներուն:

Ճիշդ է, որ մասնակի են այս ընտրությունները. ճիշդ է նաև, որ ընտրացուցակի վրայ գոյություն չունի հայ թեկնածուի անուն: Ճիշդ է տակալին, որ լիբանանահայր կ'ապրի որոշ հիասթափություն՝ հակառակ պահանջանքներուն և ընտրություններուն անոր ցուցաբերած ամենին աշխուժ մասնակցութեան: Սակայն պէտք է տեսնել այս էջերով տրուած ընտրական դիրքորոշումներու, այլ մասնաւոր՝ հետպիտեմ համագործակցութեան և աշխուժացման արդիւններուն և յիշատակելու համար, թէ ի՞նչ կը սպասուի լիբանանահայ գաղութին այս հանգրուանին:

Տարօրինակ չէ նաև լիբանանահայ համայնքին, անոր հոգեւոր թէ քաղաքական ղեկավարութեան հասցէին կատարուած վերադարձները, բայց մասնաւոր՝ լիբանանահայ համայնք-պատասխանատու մարմիններ տարանջատման անյարդղ փոքրերը: Բայց ո՞վ է ինչո՞ւ կը ձեռնարկէ նման քարոզարշաւի: Ան, որ մտահոգ է լիբանանահայ համայնքի միասնական կեցուածքին, համախուժ քուէարկելու իրողութեան, այլ խօսքով՝ անոր վճռորոշ դերակատարութեան:

Այս բոլորին առնչութեամբ կայ նաև թի՛ւ փաստելու է այդ ճամբով՝ ուժականութիւն է հեղինակութիւն, յիշեցնելու համար, որ մակալիստ անտեւտած կը մնան Լիբանանի գլխաւոր եօթը համայնքներէն մէկուն հիմնական իրաւունքները:

Վաղը՝ Կիրակի, 2 Յունիսին, հայկական քուէատարափը պիտի ջրէ բոլոր պատեհապաշտներուն ճաբընտրութիւնը և պիտի նպաստէ մեր իրաւունքներու վերականգնման քաղաքական աշխատանքներուն:

«Ա.»

## ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՔԱՅԼ ՄԸ ԱՌԱՋ Է

Հանրայայտ իրողութիւն է, որ չկայ քաղաքական կեանք, առանց քաղաքական կուսակցութեանց: Ժողովրդավարական երկիրներու մէջ, քաղաքական կուսակցութիւնները կը կազմեն հիմը քաղաքական որեւէ աշխատանքի: Անոնք բնական օղակն են քաղաքացիին եւ պետութեան միջեւ, անոնք կը տեսնեն ժողովրդային իրականութիւնը, ակնախարհ կ'ըլլան ժողովուրդին տագնապներուն եւ կը փորձեն իշխանութեանց մօտ գտնել այդ



Միրնա Սըր - Ապու Շարաֆ եւ Միշէլ Սըր Պուրճ Լամուտի Գարնամային փառատօնին:

տագնապներուն յուժոժները: Փոխադարձաբար, իշխանութիւններն այլ իրենց ծրագրներն ու որոշումները կը տարածեն ժողովուրդին մօտ օգտագործելով կուսակցութիւններու օղակը եւ անոնց ունեցած համակրանքը ժողովրդային խաւերուն մօտ:

Դժբախտաբար պարագան տարբեր է Լիբանանի մէջ: Համայնքային իր գրութեամբ Լիբանան ունի իւրայատուկ դիմագիծ մը, իսկ ժողովրդավարութիւնը՝ ընթացիկ մեծ մասնով թիւն-փոքրամասնութիւն յարաբերութեան անդին ունի տարբեր հիմ-

նաւարկական ուժին եւ հաւաքական որոշումին ծանօթ Լիբանանի հայ քաղաքացին, փաստօրէն քաղաքական առողջ գիտակցութիւնը ունի անհատէն, ղեկավարէն եւ կրօնապետէն անդին, հետեւելու քաղաքական կուսակցութեան եւ անոր կեցուածքներուն:

Լիբանանի հայութեան յանգանքը չէ թէ իր քաղաքական գործունէութիւնը այնպէս մը դասաւորուած է, որ քաղաքական կուսակցութիւններուն տուած է դերակատարութիւնը: Երբ քաղաքական կուսակցութիւնները եւ ոչ թէ համայնքը, ընտանիքը եւ ղեկավարն են հիմը առողջ ժողովրդավարութեան, ինչո՞ւ զարմանալ թէ հայութիւնը հասած է այդ գիտակցութեան եւ քաղաքացիական իր իրաւունքը կը կիրարկէ քաղաքական կուսակցութեանց ընդմէջէն:

Տեւաբար իրենց անձնական շահերէն մեկնելով կեցուածքներ փոփոխութեան ենթարկող եւ Լիբանանի հայ քաղաքացիին կեցուածքը քննադատող քաղաքական ղեմերը թերեւս պարտին անգամ մը եւս կարողալ քաղաքական կուսակցութիւններու պատմութիւնը եւ անպայմանօրէն մտածել, թէ ինչպէս կրնան վեր ելլել համայնքային խմբաւորումներէ ու գործել կուսակցութիւններու ընդմէջէն:

Այս իմաստով, մեր փորձառութիւնը կրնայ օգտակար հանդիսանալ իրենց:

Յ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

## ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կիրակի, 26 Մայիս 2002ին տեղի ունեցաւ հայ քաղաքական երեք կուսակցութիւններու ներկայացուցիչներու միջեւ հանդիպում «Երեւան-Եան» կեդրոնին մէջ:

Խորհրդակցութիւնները կեդրոնացան 2 Յունիսի Մերսի երեսփոխանական մասնակի ընտրություններուն վրայ:

Ի յուր՝ ընտրական նկատումներէ մեկնած լիբանանահայ համայնքի հասցէին կատարուած անհիմն յայտարարութիւններու, հայ քաղաքական երեք կուսակցութիւններու ներկայացուցիչները որոշեցին հրապարակել մամուլի հաղորդագրութիւն մը, կանխարգիլելու համար Լիբանանի հանրային կարծիքը պակասող մտորոշելու փորձերը:

Լիբանանեան հանրային կարծիքին ուղղուած մամուլի հաղորդագրութեան թարգմանութիւնը կու տանք ստորեւ:

Լիբանանը գոյակցութեան եւ համակցութեան հայրենիքը արձանող գլխաւոր յատկանիշը անոր պատ ժողովրդավար վարչակարգն է, որ հաստատուած է այն բոլոր հաստատումներուն միջեւ փոխադարձ յարգանքի վրայ: Այս երեւոյթին շնորհիւ է, որ Լիբանանի մէջ կը տեսնենք բազմակուսակցական դրութիւն եւ քաղաքական տարբեր հոսանքներ: Կը նկատենք նաև, որ լիբանանցիին մօտ գոյութիւն ունի քաղաքական կեանքին մասնակցելու եւ մօտէն հետեւելու փափաքը:

Առ այդ, ի՞նչպէս կարելի է արդարացնել այն իրողութիւնը, թէ ոմանք կատարելու հարցապահ տակ կ'անեն ուրիշներու լիբանանցիութիւնը, կամ ի՞նչպէս բացատրել այն երեւոյթը, թէ ոմանք չեն ընդունիր հայ քաղաքական կուսակցութիւններուն ղեկավարութեանց եւ լիբանանահայ գաղութին միջեւ գոյութիւն ունեցող վստահութիւնը. նաև լիբանանահայ գաղութին հաւատքը՝ ղեկավարութեան եւ անոր կայացուցած յատկապէս քաղաքական եւ ընտրական որոշումներուն նկատմամբ:

Հայկական քաղաքական երեք կուսակցութիւնները՝ մեկնելով վերելու կատարուած հաստատումներէն եւ իրենց քաղաքական ու ընտրական կեցուածքներէն ղժգոհ կողմերու արտայայտած հրահրիչ ու հայ համայնքը թիրախ դարձնող կեցուածքներէն, անհրաժեշտ կը պահուի մելու լիբանանեան հանրային կարծիքին, վերատին հաստատելու համար, թէ հայ համայնքը կը շարունակէ ամէն բանէ վեր դասել Լիբանանի շահերը, ինչ որ մինչեւ օրս անոր որդեգրած կեցուածքն է:

Առ այդ, հայկական երեք կուսակցութիւնները կը նախընտրեն, որ իրենց միացեալ կեցուածքներէն ղժգոհ կողմերը իրենց ձիգն ու կարողութիւնները ի գործ դնեն հայրենիքի վերաշինութեան աշխատանքին եւ ոչ թէ պարզին միջհամայնքային յարաւորութիւն հրահրելով նոյն հայրենիքի պատկանելուն միջեւ:

ՌԱԿԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԶԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ  
Ս.Դ.Հ.Կ.ԼԻԲԱՆԱՆԻ ԵՐԶԱՆԻ ՎԱՐՉՄԱՐՄԻՆ  
Հ.Յ.Դ.ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

ՎԱՂԸ՝ 2 ՅՈՒՆԻՍ ՄԵԹՆԻ ՄԱՍՆԱԿԻ ԵՐԵՍՓՈՒՍԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅ ԱՆՀԱՏԻՆ ՔՈՒԷՆ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՈՒԺԸ

ԱՅՍ ՀԱՆԳՐՈՒՄՆԻՆ ԿԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԵԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՐՑ

«ԱԶԳԱԿ»ԻՆ Կ'ԸՍԷ Հ. Յ. Դ. ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՑԻՉԸ

ՄԵՐ ՔՈՒԷՆՎ ՊԻՏԻ ՏԱՆՔ ԲՈԼՈՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԸ



Ի վերջոյ հասաւ բոլորին կողմէ սպասուած բուսակները 2 Յունիսը: Մեթնի երեսփոխանական մասնակի ընտրութեան, վաղը առաւօտեան կանոնադրութեան փուլը ժամերէն սկսեալ ու մինչեւ երեկոյ, լիբանանահայութիւնը իր վերջին եւ վճարական աշխատանքը պիտի տանի, ի խնդիր փայլուն յաղթանակի կերտման: Ամբողջ ամիսէ մը ի վեր արդէն ծաւալուին, ժրջան ու կազմակերպուած ընտրարշաւի մէջ է հայութեան, լիբանանահայութեան արծուբերոյնը՝ Պուրն Համուտը, որուն վրայ կեդրոնացած են բոլոր լուսարձակները: Բնական է, որ այդպէս ըլլալ, որովհետեւ հայութեան քուէն է, որ «պիտի խօսի», պիտի վճռէ ընտրութեան ճակատագիրը, շնորհիւ իր պլոք, «քար քուէ» ըլլալուն: Ահաւասիկ այս է, որ կը գրգռէ նախանձը շատերու, «կ'այրէ» գանձը, մինչդեռ քաղաքական հասկացողութեամբ՝ պէտք է գլխարկ բարձրացնել մտան երեւոյթի դիմաց: Ինչ կը նշանակէ զանգուածային քուէարկութիւն, եթէ ոչ համոզում, հաւատք, վստահութիւն՝ հանդէպ կուսակցութեան: Ըսած ենք ու կը կրկնենք կրկնելու գնով, որ Հայ Տեղափոխական Դաշնակցութեան եւ հայ ժողովուրդին միջեւ այս անբախտելի ու սերտ կապը կու գայ հինգէն, Դաշնակցութեան հիմնադրութեան առաջին օրերէն, երբ կուսակցութիւնը գործով կը փաստէր ժողովուրդին կողքին ըլլալու, անոր պաշտպանը ըլլալու իր երդումը: Նոյն ընթացքն է, որ կը շարունակուի աւելի քան հարիւրամեակէ մը ի վեր, եւ չարեմիքի մէջ թէ Սփիւռքի: Աւելորդ է հիշ ընել՝ բացատրելու համար այս հոլովոյթը, աւելի հիշող՝ երեւոյթը, որովհետեւ մարդիկ պիտի չհասկնան, պիտի չկարենան ըմբռնել: Նման հոլովոյթ միայն կարելի է ապրիլ ու գոյալ. անկիւս բնագոյնի է եւ չընկալուի սորովելով: Ան այդ իւրայատուկ է հայութեան:

խանգը այդօրինակ երեւոյթներու, քաղաքական շտապում ու արժանի ապտակ մը հասցնելով անոնց երեսին: Լիբանանեան հանրային կարծիքին ամբողջ ուշադրութիւնը կեդրոնացած է մեր վրայ:

Բոլորը կը սպասեն հայութեան քուէներուն արդիւնքին: Երեւոյթ մը, գորցրիւ տալու իրաւունք չունինք իբրեւ հայ: Եւ վստահ ենք, որ մեր ժողովուրդը գիտակից է այս իմաստով ու իր ամբողջական մասնակցութիւնը պիտի չզլանայ, որովհետեւ ան ազգային իր պարտականութեան ու գիտակցութեան զուգահեռ լաւ գիտէ նաեւ, թէ համայնքին գորութիւնը, համայնքին յաղթանակը՝ իր անձին յաղթանակն է, իր անձին գորութիւնն է միաժամանակ:

Մեթնի մասնակի այս ընտրութիւնը ձեռով մը բազկերակի շօշափումը պիտի ըլլայ 2005ի երեսփոխանական յանաշիկայ ընդհանուր ընտրութեանց: Ան այդ, այժմէն իսկ ցոյց տանք մեր ուժը, կազմակերպութիւնը, հաւատարմութիւնը լիբանանեան հայրենիքին նկատմամբ, նախանձախնդրութիւնը քաղաքացիական մեր պարտաւորութեան հանդէպ, ու մանաւանդ անգամ մը եւս վերահաստատենք քաղաքական նկատառելի ուժ ըլլալու մեր իրողութիւնը:

Ժողովուրդավար համակարգին մէջ քուէն է ամենէն աւելի խօսող ուժը: Միայն քուէով, մեծաթիւ մասնակցութեամբ կարելի է ինքզինք պարտադրել քաղաքականութեան մէջ: Մենք բազմիցս ապացուցած ենք այդ մէկը Լիբանանի մէջ, յատկապէս Մեթնի մէջ, կը փաստենք նաեւ այս անգամ, վաղը, 2 Յունիս 2002ին ու կը տանինք վերջնական յաղթանակը: Այն ատեն կը լռեն հայութեան դէմ բարձրացուող ուղեցոյցները, այն ատեն միայն կը փակուին, ընդմիջու կը փակուին հակահայ գարշահոտ բերանները:

ՀԱՐՁ ՎԱՐՓԱՊԵՏԵԱՆ

Միքնա Մըր-Ապու Շարաֆի գորակցելու Հ. Յ. Դաշնակցութեան որոշումէն քանի մը օր ետք, «Ազգակ» հարցազրոյց մը ունեցաւ Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Յովիկ Մխիթարեանի հետ:

Հարցազրոյցին մէջ, Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչը յայտնեց, որ Ալ-Ապրի Մուխայէրի մահով կը սպասուէր, որ Մեթնի երեսփոխանական մասնակի ընտրութեան համար քաղաքական կողմերն ու ուժերը կեդրոնանային համախոհական թեկնածուի մը վրայ, սակայն այդ մէկը տեղի չունեցաւ: Իր խօսքը շարունակելով, Յ. Մխիթարեան նշեց, թէ տրուած ըլլալով, որ Մեթնի ընտրաշրջանի մէջ Մըր ընտանիքին հետ կուսակցութեան ընտրական գործակցութիւնը անցեալ ունի, ներկայ դրութեամբ այդ գործակցութիւնը չհարունակելու պատճառներ չկան: Դաշնակցութեան հետ քառասունամեայ գործակցութիւն ունեցող Միշէլ Մըրի գլխաւորած հոսանքը առաջադրեց առանձին թեկնածու՝ յանձնա՝ Միքնա Մըրի եւ Դաշնակցութիւնը դիրքորոշուեցաւ ի նպաստ անոր:

«Ազգակ» թղթակիցին այն հարցումին, թէ արդե՞ս կուսակցութիւնը չէր անապարծ իր որոշումին մէջ, Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչը ըսաւ, թէ ընտրութեան թուականն էր կուսակցութեան միայն կուսակցութիւնը յայտարարեց իր դիրքորոշումը: Ան նշեց, թէ վերջապէս ընտրութեան գործընթացն է եւ դաշնակից կողմին հետ գործնական աշխատանքներ համակարգելու խնդիր գոյութիւն ունի եւ արագ որոշում առնելու հարց չկայ:

Հարցազրոյցին մէջ, Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչը նշեց, թէ ընտրութիւնները ընտանեկան ընդթ չունին: Ան աւելցուց, որ Հ. Յ. Դ. Կեդրոնական ընտրանքներն այն եւ անոր կապուած համապատասխան տեղական կառուցութեան նախապատրաստական աշխատանքներուն վերաբերող գեղոյցներուն համաձայն, հայ թուէրակողները ինչնուն առ հարկը համեմատութեամբ ընդառաջած են ներկայացուցած դիմումներուն: Ան հաստատեց, որ հայ թուէրակողները միշտ գիտակցած են իրենց քաղաքացիական պարտականութեան եւ հեռաձայնային դիմումներուն կամ բնակարանային այցելութիւններուն ընդառաջելու կողքին՝ թուէրակցութեան օրը իրենց մասնակցութեամբ փաստած են իրենց խօսքին իրաւացիութիւնը:

«Լիբանանեան մամուլը տողատակի կամ ուղղակի դարձեալ կ'անդրադառնայ հայութեան պլոք թուէրակելու երեւոյթին, ինչ կ'ըսէք այս մասին», հարցու-

մի մը պատասխանելով՝ Յովիկ Մխիթարեան հաստատեց, որ լիբանանահայ համայնքը թուէրակած է եւ կը շարունակէ համախումբ թուէրակել, սակայն ասիկա միայն մեր համայնքի պարագային չէ, կան նաեւ այլ համայնքներ, որոնք ընդառաջելով իրենց ղեկավարութեան կոչերուն՝ համախումբ կը թուէրակեն: Մեր պարագան լուսարձակները կը կեդրոնացնէ, որովհետեւ այստեղ կայ վճռորոշ դեր ունենալու հարց: Լիբանանահայ համայնքը միշտ ընդառաջած է ու կը շարունակէ ընդառաջել Հ. Յ. Դաշնակցութեան կոչերուն:

Այլ հարցումի մը պատասխանելով, Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչը դիտել տուաւ, որ ընտրական դիրքորոշումը պէտք է զանազանի քաղաքական գործակցութեան: «Մեր քաղաքական վարքագիծը յատկ է: Մեր ընտրական գործակցութիւնը Մեթնի պարագային ունի անցեալ եւ առ այսօր այդ գործակցութիւնը խախտելու նախադրեաններ չկան: Հակադրուած ըլլալով առհասարակ Լիբանանի մէջ մեր քաղաքական ուղեգիծին հակոտնեայ դիրքերու վրայ գտնուող տարբեր հոսանքներու, մենք թշնամանք չենք տածեր անոնց նկատմամբ»:

Անդրադառնալով հայ յարանուանութիւններու երեք հոգեւոր պետերու հրապարակած 20 Մայիսի կոչին, Յ. Մխիթարեան ըսաւ, որ այդ կոչը եկաւ ընդգրծելու, թէ այս հանգրուանին կայ համայնքի ուժեղացումը եւ հեղինակութեան պահպանման հարց: Այս թուէրակութեան հայ համայնքին զանազան հատածներուն մեծ թիւով մասնակցելու անհրաժեշտութիւնը ցոյց կու տայ, որ այս առումով գոյութիւն չունի ներհամայնքային որեւէ տարակարծութիւն: Թիւով եւ թուէրակ պէտք է փաստել, որ լիբանանահայ համայնքը աշխուժ մասնակցութիւն ունի Լիբանանի քաղաքական կեանքին մէջ եւ կը շարունակէ տէր կանգնիլ իր իրաւունքներուն: Ան նաեւ աւելցուց, որ կրնան ըլլալ պարագաներ, երբ լիազօրէժ ձեւով չեն յարգուիր համայնքին իրաւունքները, սակայն այդ երեւոյթները պատճառ պէտք չէ ըլլան լիբանանահայ քաղաքական բեմին վրայ կրաւորական կեցուածք ցուցաբերելու: Մխիթարեան հաստատեց, որ եթէ վերջին դիրքորոշումը որեւէ գործի, հայ համայնքը ինքնաբերաբար ժամանակի ընթացքին պիտի կորսնցնէ իր իրաւունքները: «Ան այդ, մենք պարտաւոր ենք ամէն առիթով աշխուժօրէն մասնակցութիւն բերելու Լիբանանի քաղաքական կեանքին եւ պահանջատէր մնալու մեր համայնքին իրաւունքներուն նկատմամբ», հաստատեց ան:

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ, «ԴԱՍԱՏՈՒՆԵՐ»

Վաղը, հակառակ Մեթնի ընդդիմադիր փակատի կամքին՝ հայութիւնը պիտի մասնակցէ, որ իրապէս տեր է շրջանին՝ իր մեծաթիւ ու վճռորոշ քուէով, որուն ձգտելու եւ անոր չտիրանալու տագնապն է պատճառը, որ շատեր կը խօսեն մեզ, կ'ամբաստանեն, «Կեթ-թո» ի ու փակ կ'իջաւայրի անհեթեթ պատմութիւններ կը հիւսեն Պուրն Համուտի հասցէին, իսկ ուրիշներ՝ հինգէն եկող մաղձ մը, ոյս մը ունին մեզի նկատմամբ, որ սակայն պիտի կրճէ գիրքն ու անոնք այս աշխարհէն պիտի մեկնին առանց իրենց «երազը» իրականացուցած ըլլալու... Հայութեան նկատմամբ շրջապագերծուած հակաքաղաքացիութիւնը վաղը պիտի փշրուի, երբ հայութիւնը քաղաքական - գաղափարական ու յարանուանական անխտիր իր բոլոր հատուածներով, իբրեւ մէկ ամբողջութիւն պիտի ուղղուի քուէատուփ ու պիտի քուէարկէ ի նպաստ նոյն թեկնածուին: Բնականաբար, այն մարդիկը, որոնք ամիսէ մը ի վեր հալածախտ կը տանապի՞ն խօսքով հայութիւնը, վաղը պիտի փոքրեն ամէն գնով հրահրել մեր կիրքերը, գրգռիչ արարքներով ուշադրութիւնը շեղել մեր կազմակերպուած ու կուռ շարքերուն ընթացքին: Բայց մենք պիտի մնանք սառնափոր, գուսպ եւ մեր քուէով ու մեր միասնական կեցուածքով պիտի պատաս-

Դարձեալ քուէարկութիւն կայ եւ դարձեալ ցեխարձակում աչէն թէ ձախէն, մեղադրանք ու նոյնիսկ հայհոյանք՝ հայութեան հասցէին... Ասոր վարժութեանը թէն, կը փաստենք նաեւ այս անգամ, վաղը, 2 Յունիս 2002ին ու կը տանինք վերջնական յաղթանակը: Այն ատեն կը լռեն հայութեան դէմ բարձրացուող ուղեցոյցները, այն ատեն միայն կը փակուին, ընդմիջու կը փակուին հակահայ գարշահոտ բերանները:

Մարդիկ կը խօսին հայկական կեթոյի մասին, Դաշնակցութեան բռնատիրութեան մասին եւ դեռ ինչէ՞ր... Այսպիսի վերագրումներ պարզապէս կ'ենթադրեն մօտալուտ պարտութեան մը տագնապանքը, ո՛չ աւելին... Հայութիւնը, բայց յատկապէս Դաշնակցութիւնը, կը մեղադրուի անով, որ պետութեան կողքին կը կանգնի... Լա՛ւ, եթէ այդպէս է, մե՞ղք է... Այս նորութիւնն չէ բնաւ: Հայութիւնը, չլուրով հանդերձ պետութեան սխալներուն եւ արձանագրած թերութիւններուն, չէ վարանած անոր կողքին կանգնելու, ո՛վ որ եղած է անոր գլխուն վրայ... եւ գէշ չէ ըրած... անցնող քառորդ դարուն յատկապէս պատմութիւնը եկաւ ցոյց տալու, որ իրաւունք ունէինք: Երբ ամէն կողմէ պետութիւնը կը հարուստուէր... Առնչակ երբ անոր մնացած իր ձեւակազմ գոյութիւնը մը միայն, հայութիւնը

չէր վարաներ անոր կողքին մնալու, որովհետեւ շատ պարզ էր. ո՛ր որ պետութիւն չկար, հոն կար միայն աւեր ու մահ, թալան ու քանդում: Եղբայր եղբոր չէր խնայէր՝ յառնն քաղցր ու զգուճ կարգախօսներու, որոնց համար այնքա՛ն սուղ վճարեց այս հայրենիքը... ու տակաւին կը շարունակէ վճարել:

Օրինակ, Ժորժ Հատի, անցեալի լեւոնեան գլխաւոր շեփորահարը Լիբանանի մէջ, այսօր համայնքայնութեան տուտուկը կը նուազէ եւ կը մեղադրէ մեզ՝ հայութիւնը... Իր պատեհապաշտութիւնը իրեն հալալ, բայց եւ այնպէս մեզի դաս տալու ձանձրոյթը չվերցնէ իր լայն ուսերուն վրայ: Շնորհակալ ենք պարգապէս: Դեռ իր գլխաւոր փորձ խթը այն է, որ չէ կրցած իր որդեգիրին՝ Բաֆֆի Մատէսանի, թանկագին «ժառանգութիւն»ները մատուցանել մեզի, ինքնաշարժ երեսփոխանական կապոյտ թիւով... Ապերախտութիւն թող չսեպուի այդ մեր կողմէ... Թերեւս այլ համայնքի մը համար աւելի պէտք ըլլան երեսփոխանական այդ նուիրական «ժառանգութիւն»ները...

Ժամանակին շեփոր հնչեցնելուն համար լայնօրէն եթէ կը վարձատրուէր պարուն Հատի, հիմա համայնքայնութեան տուտուկ

նուագելուն վարձատրութիւնը մեզմէ թող չակնկալէ...

Պետութիւն եւ պետականութիւն մեզի համար թանկագին են... Թող մերոյ մեզի, եթէ մեր սկզբունքներուն չենք դաւաճաներ... Որքա՛ն խնայուած պիտի ըլլար այս հայրենիքին, անոր տնտեսութեան եւ յատկապէս երիտասարդութեան: Մեր պետութեան չեն պակսիր թերութիւններ, չեն պակսիր նաեւ մեղքերը, բայց տակաւին ան կը մնայ այս հայրենիքին երաշխիքը... պետականութիւնը մնայուն է. պետական մարդիկը գնայուն են. վաղ կրնայ այսօրուան ընդդիմադրութեան մէկ թելը անցնիլ պետութեան գլուխը... Պիտի ուզէ՞ր այդ թելը, որ հայութիւնը իրեն դէմ քուէարկէր... Դեռ կը խօսուի Դաշնակցութեան մեծատիրութեան մասին... «Եթէ թող խելքը» պիտի ըսուէր: Թող մեր ի մեզի ըսելու, որ այս ազգի մարդիկը չեն ճանչնար Դաշնակցութեան հմայքը... եթէ երբեք կարդացած ըլլային Ռ. Տէր Միհասեանի այն դրուագը, ուր կը նկարագրէ Կարսի բանտը... տարբեր կրնար ըլլալ իրենց կեցուածքը... Մարդիկ կը բանտարկուէին, տեղ մը, որուն դուռը մի միայն մերսէն կրնար կղպուիլ կամ բացուիլ... եւ Դաշնակցութեան այդ բանտը պահակ

այ չունէր... Դաշնակցութեան հմայքը կու գայ անկէ, որ գիտէ, յատկապէս տագնապի օրերուն, իր ժողովուրդին տեր կանգնիլ. գիտէ Լիբանանի իրաւունքներուն տեր կանգնիլ... Անցնող քառորդ դարու պատմութիւնը վկայ, որ Դաշնակցութիւն - ժողովուրդ կապերը չեն պայմանաւորուիր մեծատիրութեամբ... Պահ մը ենթադրենք, որ մեր վրայ կրակ ու բոց թափողներուն հետ օր մը դաշնակցելու պատիւը ունեցած ըլլայինք (անկարելի չէ նաեւ այդ) պիտի ուզէ՞ր, որ մեր քուէներէն մաս մը իրենց ընդդիմադիրներուն շնորհէինք...

Եթէ հաւատարիմ կը մնանք մեր դաշնակցներուն, եթէ մեր խոստումը յարգել գիտենք, սիրով կ'ընդունինք կեթոյնականութիւնը՝ միշտ ի խնդիր լիբանանեան պետականութեան շահերուն... Նոյնիսկ եթէ այդ մէկը մեզը նկատուի մեզի:

Բայց իսկապէս որ շնորհակալ ենք այս մարդոց, որոնք Լիբանան շատ բան «կը պարտի» իր քանդու միջ մէջ: Բայց ի մեր Աստուծոյ, թող խնայեն իրենք իրենց, եւ Լիբանանին, թող իրենք լաւ սերտնէ պատմութեան դասերուն... Մենք պէտք չունինք իրենց դասերուն...

ՉԻՆԱԿԱՆ

ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՍԱԿԱՅՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆ



ՎԱՐԸ՝ 2 ՅՈՒՆԻՍ  
ՄԵԹՆԻ ՄԱՄՆԱԿԻ  
ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ  
ԸՆՏՐՈՒԹԵԱՆՆԵՐ

# ՀԱՅ ԱՆՀԱՏԻՆ ՔՈՒԷՆ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԵԱՆ ՈՒԺԸ

## ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԻՐ ՔՈՒԷՆՆԵՐՈՎ ՏԷՐ ՊԻՏԻ ԿԱՆԳՆԻ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐՈՒՄ ԵՒ ՊԻՏԻ ԱՐՏԱՅԱՅՏԷ ՀԱՒԱՔԱԿԱՆ ԻՐ ԿԱՄՔԸ

2 Յունիսի ընտրութեան նախօրեակին, «Ազդակ» վերջին շաբաթներուն առաճաճի հանդիպումներ ունեցաւ լիբանանահայ յարանուանութիւններու հոգեւոր պետերուն հետ, ներկայացնելու համար այս ընտրութեան դերն ու նշանակութիւնը գաղութին համար:

Ստորեւ կու տանք այս հարցազրոյցներուն ընդհանուր համադրումը:

**ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ**

Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ եպս. Խաչերեան Հայ յարանուանութիւններու հոգեւոր պետերու մամուլային կոչին (20 Մայիս) մասին արտայայտուելով ըսաւ, որ իբրեւ Համայնքային իրենք բնականաբար շահագրգռուած են լիբանանեան քաղաքական բեմին իրադարձութիւններով: Ան նշեց, թէ ընտրութիւնները, ըլլան ամբողջական կամ մասնակի, ուղղակիորէն կը շահագրգռեն Հայութիւնը եւ այս առիթով Համայնքային իրենք յարմար նկատած են կոչ ուղղելու լիբանանահայ յարանուանի, որպէսզի ցոյց տան, թէ Հայութեան մասնակցութիւնը պէտք է ըլլայ միասնական, ինչպէս նաեւ շեշտելու ընտրութիւններուն կարեւորութիւնը լիբանանցի եւ լիբանանահայ քաղաքացիին կեանքին մէջ եւ զանոնք հիմնականորէն մասնակցութեան առաջնորդելու: Առաջնորդը նշեց, թէ Լիբանանի երեսփոխանական ընտրութիւնները, երկրի Համայնքային գրութեան մեկնած, անհրաժեշտ են եւ Համայնքային գրութիւնը ամուր հիմքեր վրայ պահող երաշխիքներէն մէկը ընտրութիւններուն քուէներուն ճամբով իւրաքանչիւր Հայ մայրի գաւազններուն ըսած խօսքն է եւ մասնակցութեան միջոցով իր ներկայութիւնն ու աշխտութեան շնորհը:

Ան դարձեալ յիշատակեց քուէին ունեցած կարեւորութեան Գեղամ եպս. ըսաւ, թէ անկախ քաղաքացիի մը զօրաւոր իրաւունքն է, եւ անոր գործածութիւնը կախեալ է քաղաքացիին: «Այս զօրաւոր գէնքը անձնական կամքով է, որ կ'օգտագործուի ի նպաստ երկրին», նշեց ան:

«Ազդակ» թղթակիցին այն հարցումին, թէ այս ընտրութիւններուն ճամբով Հայութիւնը ի՞նչ պատգամ ունի փոխանցելու: Առաջնորդը ըսաւ, թէ Մեթնի պարագային, որ Հայութիւնը միշտ ալ մեծաթիւ եղած է, անպայման որ Հայութիւնը շահագրգռուած է մասնակցելու: Ան աւելցուց,

«Ազդակ»-ին Կ'ԸՍԵՆ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ՅԱՐԱՆՈՒԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐԸ, ՄԵԹՆԻ ՄԱՄՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ



թէ հակառակ անոր որ թեկնածուները Հայր չեն, սակայն իւրաքանչիւր թեկնածու կրնայ մաս կազմել խորհրդաւոր պետերու մամուլային կոչին: Առաջնորդը ըսաւ, թէ Մեթնի մէջ Հայութիւնը ինչպէս անցեալին, այսօր ալ պէտք է շարունակէ իր խօսքը ըսելու: «Լիբանանի ընտրութիւնները կարեւոր է Հայութեան տիրական ներգործումով եւ շատեր, մինչեւ այսօր, հաշիւ կ'ընեն Հայութեան քուէին: Այսօր եւս պէտք է ցոյց տանք, որ Հայութեան ներկայութիւնն ու ձայնը տակաւին վճարող կը մնան», Հաստատեց ան:

**ՎԱՐԳԱՆ ԵՊՍ. ԱՇԿԱՐԵԱՆ**

Հայ կաթողիկէ պատրիարքութեան ընդհանուր փոխանորդ Գեղար. Վարգան եպս. Ազգարեան այս առիթով յայտնեց, թէ իւրաքանչիւր մարդ ունի ներկայութիւնը եւ պետականութիւնն ունի եւ հոն դրօշը ազատօրէն կը ծածանի: Եւ երկրորդ Հայրերը, ուր ինք կ'ապրի ու կը գործէ: Լիբանանահայ

թեմի ընդհանուր փոխանորդը նշեց, թէ ամէն քաղաքացի իր արժէքը ունի իր քուէին ընդմէջէն եւ լիբանանահայութեան քուէն ալ իր իրաւաստեակ արժէքը ունի այս մասնակի ընտրութիւններուն: Ան հաստատեց, թէ Հայ Համայնքը իր մասնակցութեամբ ցոյց պիտի տայ լիբանանցիին, որ ան իսկապէս հարազատ քաղաքացի է եւ չ'ապրի փակ շրջանի մէջ: Իր խօսքը շարունակելով Վարգան եպիսկոպոս ըսաւ, թէ հակառակ անոր որ այս ընտրութիւնները մասնակի են եւ չկայ Հայ թեկնածու, բայց Հայութիւնը իր պարտականութիւնը պիտի կատարէ ընտրելու այն, որ արժանաւոր է իր ժայռին եւ խորհրդարանին մէջ լաւապէս պիտի ներկայացնէ այն ժողովուրդը, որուն կողմէն ինք ընտրուեցաւ եւ որ պատրաստ է պաշտպանելու ըրողը անիրաււածներուն շահերը: «Մեր պարտականութիւնն է ընտրութիւններու բերած մեր մասնակցութեամբ փաստել, թէ մենք կը գիտակցինք այդ իրողութեան եւ մեր ձայնը կու տանք անոր, որուն արժանի կը նկատենք», շեշտեց ան:

**ՎԱՐԳԱՆ ԵՊՍ. ԱՇԿԱՐԵԱՆ**

Լիբանանահայութեան ուղղած իր վերջին խօսքին մէջ Վարգան եպս.



Վարգան ըսաւ, թէ ինք միշտ հաւատացած է լիբանանահայութեան միասնականութեան: Երբ Հայուն եւ երկրին շահը հոգը, ուր ունինք պետականութիւն: «Մեզի համար երկրորդ Հայրերը հոն է, Լիբանանն է, ուր կ'ապրինք: Անշուշտ իր կ'ըլլայ Համայնքուն եւ Հաւաքական մասնակցութիւնը: Այս պիտի արդէն իսկ ապահովուած կ'ըլլայ Համայնքուն եւ Հաւաքական մասնակցութիւնը: Այս է ձեզ հարունակելու մեր ներկայութիւնը», Հաստատեց առաջնորդը:

Ընտրութեան նախօրեակին, իբրեւ վերջին խօսք, Գեղամ եպս. Խաչերեան ըսաւ, թէ եթէ լիբանանահայութիւնը կ'ուզէ Լիբանանի մէջ իր դերակատարութիւնը շարունակել նոյնքան բարձր մակարդակի վրայ, պարտաւոր է իր քաղաքական վարկը եւ Հայութեան նկատմամբ իր քաղաքական վարկը: «Այսօր մենք անգամ մը եւս պէտք է ցոյց տանք մեր ինքնութիւնը եւ հաւաքաբար պէտք է մասնակցինք ընտրութիւններուն», նշեց ան:

**ՎԵՐ. ՓՈԼ ՀԱՅՏՈՍԹԵԱՆ**


Իր կարգին, Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան կեդրոնական Մարմինի ատենապետ վեր. Փոլ Հայտոսթեանը Հայտոսթեանի Հայ յարանուանութիւններու երեք հոգեւոր պետերու ուղղած միասնական կոչին աւանդելով, ըսաւ, թէ անոր համար նուազագոյնը երկու շարժառիթի մասին պէտք է խօսիլ: Ան նշեց, թէ առաջին շարժառիթը այն է, թէ յաճախ մարդիկ կը կարծեն, որ քաղաքական եւ կրօնական աշխարհները իրարմէ անջատ են եւ բաժնուած: Հետեւաբար եկեղեցիներն ու յարանուանութիւնները իրենց հոգեւոր մարդին մէջ պէտք է աշխատին: Սակայն Լիբանանի եւ Հայ ժողովուրդին կեանքը կը փաստեն, թէ կարելի չէ անջատել մեր հոգեւոր կեանքը մեր առօրեայէն եւ պարտաւորութեանը կեանքէն: Հետեւաբար շատ բնական երեւոյթ մըն է, որ յարանուանութիւններու եւ եկեղեցիին անուշով կոչ ուղղուի ժողովուրդին, որ մասնակցի ընտրութիւններուն:



